ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

02/05.7/13258-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-908-24.03.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 384-Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչանյան
Հեռ. 515656

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-908-24.03.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նաև Նախագիծ) նախատեսվում է փոփոխություն և լրացումներ իրականացնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածում, որը պատասխանատվություն է սահմանում *հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:* Ընդ որում, Նախագծով առաջարկվող փոփոխությունը վերաբերում է հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելուն: Մասնավորապես, ներկայացված Նախագծով առաջարկվում է 169.28-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «*5. Հայտարարատուի կողմից հայտարարագրում առաջին անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է նախազգուշացում խախտում թույլ տված անձի նկատմամբ*»:

Նախագծով առաջարկվում է նաև նշված հոդվածը 5-րդ մասից հետո լրացնել նոր՝ 6-րդ և 7-րդ մասերով, այն է՝

«*6. Հայտարարատուի կողմից հայտարարագրում երկրորդ անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:*

7. Հայտարարատուի կողմից հայտարարագրում երրորդ և ավելի անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:»:

Օրենսգրքում նման փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ ներկայումս հայտարարագիր լրացնում և ներկայացնում են նաև հանրային ծառայողները, որոնց դեպքում գործող տուգանքի չափը անհամաչափ է, քանի որ վերջիններս վարձատրվում են շատ ավելի ցածր:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

«Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:»:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և չհրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը կարող են հայտարարագրում ուղղում անելու միջոցով վերացնել հայտարարագիրը հանձնելուց հետո՝ քառօրյա ժամկետում: Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և հրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը վերացնելու նպատակով կարող են դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Հանձնաժողովը մերժում է դիմումը, եթե դրանում նշված տվյալի անհամապատասխանությունն այլ կերպ բացահայտված է (…):»:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ հայտարարագիր ներկայացնելուց հետո անձը կարող է չհրապարակված հայտարարագրում քառօրյա ժամկետում իրականացնել ներկայացված տեղեկատվության շտկում: Ավելին, երբ հայտարարատուն հրապարակված հայտարարագրում հայտնաբերում է անհամապատասխանություն, սեփական դիմումի հիման վրա կարող է շտկել այն: Այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված են համապատասխան օբյեկտիվ երաշխիքներ, որոնց պայմաններում անձը հնարավորություն ունի վերացնելու իր կողմից հայտնաբերված անհամապատասխանությունները, այդ թվում՝ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական ներկայացված տվյալները:

Վերոգրյալ կարգավորումների պայմաններում, երբ առկա են օրենսդրորեն տրված հնարավորություններ՝ հայտարարագրում առկա անհապատասխանություններն անձի կողմից ինքնուրույն շտկելու համար, հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար նախազգուշացում կիրառելը փաստացի կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ հայտարարատուները, վստահ լինելով, որ զանցանքի համար նախատեսված է նախազգուշացում, հայտարարագրերի նկատմամբ դրսևորեն առավել անփույթ վարքագիծ: Մինչդեռ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր խախտման դեպքով իրականացվում է համապարփակ ուսումնասիրություն, հարուցվում է վարույթ, ինչը պահանջում է Հանձնաժողովի ռեսուրսների ներդրում:

Այդ համատեքստում պետք է ուշադրություն դարձնել նաև նշված իրավախախտման վտանգավորության աստիճանին և տույժի սահմանմամբ հետապնդվող նպատակին: Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ հոդվածի շրջանակում նկարագրվող գրեթե բոլոր իրավախախտումների համար կիրառվում է տուգանք վարչական տույժը: Ընդ որում, միակ իրավախախտումը, որի համար նախատեսվում է նախազգուշացում, այն է՝ հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողով ներկայացնելը, հիմնականում կրում է տեխնիկական բնույթ, և տվյալ դեպքում խախտվում են միայն հայտարարագրի ձևին ներկայացվող օրենսդրական պահանջները:

Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ հոդվածով նկարագրված զանցանքները բովանդակային առումով ուղղված են կոռուպցիոն հնարավոր երևույթները քողարկելուն, ուստի նշված շրջանակում իրականացվող իրավախախտումներն ունեն առավել բարձր վտանգավորություն:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վարչական պատասխանատվության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում՝ ամրագրելով, որ արարքի ֆինանսական պատասխանատվությունն այնպիսի զսպող միջոցի կիրառմամբ, ինչպիսին տուգանքն է, պետության հայեցողության տիրույթում է (Վալիկո ՍՊԸ-ն ընդդեմ Իտալիայի (Valico S.r.l. v. Italy) 2006 թ. մարտի 21-ի որոշում)[1]:

ՀՀ սահմանադրական դատարանն իր հերթին 2016 թվականի հուլիսի 8-ի ՍԴՈ-1291 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*…արձանագրելով, որ օրենսդրի իրավասության շրջանակներում է, մասնավորապես, որոշել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, սահմանել վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների, վարչական պատասխանատվության միջոցների ու չափերի շրջանակը, միաժամանակ անհրաժեշտ է համարում նշել, որ հիշյալ հարցերում օրենսդրի հայեցողությունն ունի իր սահմանադրական շրջանակները: Նշված լիազորություններն իրացնելիս օրենսդիրը պետք է ղեկավարվի սահմանադրական սկզբունքներով: Հանրային իշխանության իրականացումը, նախևառաջ, սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով, որը հանդիսանում է իրավական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության, հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը:*»:

[1]https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%22valico%22],%22documentcollectionid2%22:[%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22,%22DECISIONS%22],%22kpdate%22:[%222006-03-21T00:00:00.0Z%22,%222006-03-25T00:00:00.0Z%22],%22itemid%22:[%22001-110210%22]}

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նշել է, որ. «*...համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև:*»:

Վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ տույժն արդարացի է, եթե համաչափ է կատարված զանցանքին և բավարար է տույժի նշանակման նպատակներին հասնելու տեսանկյունից: Իսկ սույն դեպքում, կարծում ենք, որ տուգանքի ձևով վարչական տույժի սահմանումը բավարարում է այդ չափանիշներին:

Ասվածը հիմնավորվում է նաև արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությամբ: Այսպես, նախ՝ հարկ է նշել, որ քննարկվող իրավախախտման համար պատասխանատվություն (և՛ վարչական, և՛ քրեական) սահմանված է նաև մի շարք երկրներում, որոնց փորձը, որոշակի տարբերություններով հանդերձ, վկայում է այն մասին, որ հայտարարագիրը սահմանված կարգով չներկայացնելու կամ սխալ ու ոչ ամբողջական ներկայացնելու համար սահմանվում է համեմատաբար խիստ պատասխանատվություն:

Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» դաշնային օրենքի[2] համաձայն՝ *այն պաշտոնատար անձը, ով սահմանված կարգով չի ներկայացրել եկամուտների, գույքի և գույքային բնույթի պարտավորությունների մասին հայտարարագիրը կամ ծախսերի վերաբերյալ հայտարարագիրը կամ վերջինիս մեջ թերի կամ ոչ հավաստի տեղեկություններ է ներկայացրել, ազատվում է զբաղեցրած պաշտոնից:*

Գերմանիայի՝ «Բունդեսթագի անդամների վարվելակերպի կանոնների մասին» օրենքի համաձայն[3]՝ *եթե Բունդեսթագի անդամն իր եկամուտներն ու գույքը, ինչպես նաև մատուցված ծառայությունները չի հայտարարագրել, ապա նրա նկատմամբ կարող է սահմանվել տուգանք, որը չպետք է գերազանցի*

[2] https://digital.gov.ru/ru/documents/3419/
[3] https://www.bundestag.de/resource/blob/195006/a1232d4a394f7cdee1b9bccc2f374880/code_of_conduct-data.pdf

վերջինիս տարեկան աշխատավարձի կեսը, իսկ թեթև վտանգավորության արարքի դեպքում՝ կարող է տրվել նախազգուշացում:

Ֆիլիպինների՝ «Հանրային ծառայողների և աշխատողների էթիկայի և վարվելակերպի կանոնների մասին» օրենքի համաձայն[4]՝ *եթե պաշտոնատար անձը պատշաճ կերպով չի ներկայացրել հայտարարագիրը, ապա պետք է վճարի տուգանք, որը չի գերազանցում վերջինիս տարեկան աշխատավարձի կեսը, կամ նրա պաշտոնավարումը կասեցվում է մինչև մեկ տարի ժամկետով, կամ եթե արարքն առավել վտանգավոր է, ապա վերջինս կարող է ազատվել աշխատանքից*:

Բելգիայի՝ «Մանդատի, գործառույթների և գույքային ակտիվների հայտարարագրման պարտավորության մասին»[5] օրենքի համաձայն՝ *հայտարարագիրը ոչ պատշաճ ներկայացնելու դեպքում պաշտոնատար անձը պետք է վճարի տուգանք՝ 100-ից 1000 եվրոյի սահմաններում, իսկ եթե նույն արարքը վերջինիս կողմից 3 տարվա ընթացքում կրկնվել է, ապա տուգանքի չափերը եռապատկվում են:*

Ավելի մեղմ սանկցիաներ են նախատեսվում, օրինակ, Շվեդիայի՝ «Ռայխստագի անդամների տնտեսական շահերի և պարտավորությունների մասին»[6] օրենքով, որի համաձայն՝ *եթե Ռայխստագի անդամը պատշաճ չի ներկայացրել հայտարարագիրը, ապա այդ մասին հայտարարվում է լիազումար նիստի ժամանակ*: Մեծ Բրիտանիայում[7] Համայնքների պալատի անդամի վարվելակերպի կանոնների համաձայն՝ *եթե անդամը չի ներկայացրել հայտարարագիրը, ապա պետք է ներողություն խնդրի նիստի ժամանակ:*

Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտարարագրերում սխալ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու դեպքում կիրառվում են պատասխանատվության խիստ միջոցներ: Օրինակ, ինչպես արդեն նշվեց, տարածված պատասխանատվության տեսակ է զբաղեցրած պաշտոնի դադարեցումը, կասեցումը կամ տուգանքի կիրառումը: Մասնավորապես, կիրառվող տուգանքի չափը կարող է հասնել մի քանի հարյուր եվրոյից կամ դոլարից մինչև

[4] https://lawphil.net/statutes/repacts/ra1989/ra_6713_1989.html#:~:text=Public%20officials%20and%20employees%20shall,public%20interest%20over%20personal%20interest.
[5] https://www.ejustice.just.fgov.be/cgi_loi/change_lg_2.pl?language=fr&nm=1995021222&la=F
[6] http://www.oecd.org/corruption/anti-bribery/47489446.pdf
[7] https://www.right2info.org/resources/publications/asset-declarations/uk_code-of-conduct-house-of-commons

մի քանի հազարի, իսկ պաշտոնատար անձի պարտավորությունները կարող են կասեցվել մինչև 1 տարի ժամկետով (օրինակ՝ Բելգիա, Գերմանիա, Ֆիլիպիններ) և այլն: Այլ երկրներում հայտարարագրերում սխալ տեղեկատվություն ներկայացնելու համար պատասխանատվության նախազգուշացում տեսակը հազվադեպ է կիրառվում, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ այն սույն իրավախախտման կանխարգելման արդյունավետության տեսանկյունից խնդրահարույց է:

Բացի այդ, Նախագծով առաջարկվում է հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը տարբերակել՝ կախված նման խախտումը առաջին, երկրորդ, երրորդ և ավելի անգամ անզգուշությամբ կատարելու հանգամանքից: Հարկ է նշել, որ սույն իրավախախտման դեպքում «առաջին, երկրորդ կամ երրորդ և ավելի անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը» տերմինների կիրառումն իրավական տեսանկյունից խնդրահարույց է: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրորդ անգամ նույն արարքի համար վարչական պատասխանատվություն կիրառելիս հիմք է ընդունվում վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն արարքը կատարելու հանգամանքը, ինչը պայմանավորված է Օրենսգրքի 38-րդ հոդվածի կարգավորմամբ, համաձայն որի՝ *եթե վարչական տույժի ենթարկված անձը տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարում, համարվում է վարչական տույժի չենթարկված*: Այսինքն՝ Օրենսգիրքը համանման իրավահարաբերությունների դեպքում ամրագրում է որոշակի պայմաններ, որոնք, ըստ էության, իրենց արտացոլումը չեն գտել առաջարկվող կարգավորումներում:

Ելնելով վերոգրյալից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Նախագծի ընդունումը՝ ներկայացված կարգավորումների տեսքով, համարում է ոչ նպատակահարմար: Միաժամանակ, Նախագծով և հիմնավորմամբ բարձրացվող խնդիրը լուծելու տեսանկյունից առաջարկվում է դիտարկել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիայի ստորին շեմը վերանայելու հնարավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 384 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արմեն Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (Խ-908-24.03.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Խ-908-24.03.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 169.28-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Հայտարարատուի կողմից հայտարարագրում առաջին անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը

առաջացնում է նախազգուշացում խախտում թույլ տված անձի նկատմամբ:»:

2) լրացնել նոր 6-րդ եւ 7-րդ մասեր.

«6. Հայտարարատուի կողմից հայտարարագրում երկրորդ անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

7. Հայտարարատուի կողմից հայտարարագրում երրորդ եւ ավելի անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածը սահմանում է հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար պատժաչափեր:

Օրենքի 5-րդ մասի վերլուծությունից հետեւում է, որ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը անմիջապես առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

Մինչդեռ, հայտարարագրեր լրացնում եւ ներկայացնում են նաեւ այնպիսի հանրային ծառայողներ, ում դեպքում գործող օրենքով նախատեսված տուգանքի չափը անհամաչափ է, քանի որ վերջիններս վարձատրվում են շատ ավելի ցածր:

- Նախագծով հնարավորություն է տրվում առաջին անգամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար նախատեսել նախազգուշացում:

- Միաժամանակ, առաջարկվող լրացմամբ՝ տուգանքի չափը կիսով չափ նվազեցվել է երկրորդ անգամ իրավախախտումը կատարելու համար:

- Իսկ արդեն երրորդ եւ ավելի անգամ նույն արարքը կատարելու դեպքում՝ առաջարկվում է թողնել նույն պատժաչափը, այն է՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով տուգանքը: